

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռիս Դիվանը լիազորված է հայտարարելու, թե Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Հայրապետի նախագահության ներքո գումարված Գերագույն հոգևոր խորհուրդը 30 ապրիլ 1970 թվականի իր նիստում, երկրորդ անգամ քննարկելով նախկին եպիսկոպոս Վազգեն Օհանյանի պարագան և նկատի ունենալով հիշյալի 30 հունվար և 22 ապրիլ 1970 թվակիր կարգաթողության գրերը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին, ցավով արձանագրեց, որ նա, հոգևոր ծառայության իր ուխտը դրժելով, կարգաթող է եղել և, հեռանալով եկեղեցուց, արդեն 15 փետրվար 1970 թվականից սկսած, ապրում է որպես աշխարհական:

Գերագույն հոգևոր խորհուրդը խնդրեց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին, Հայրապետական Իր վճռով՝ Վազգեն Օհանյան եպիսկոպոսին կարգալույծ հռչակել:

Նորին Սրբությունը ընթացք տալով Գերագույն հոգևոր խորհրդի միջնորդությանը, 2 մայիս 1970 թվակիր հայրապետական Իր վճռով կարգալույծ արեց նախկին եպիսկոպոս Վազգեն Օհանյանին, դասելով նրան աշխարհականաց շարքը, իր նախկին աշխարհական Գեորգ անունով, զրկելով նրան եկեղեցական որևէ արարողության, եկեղեցական կամ եկեղեցուն առընթեր որևէ կազմակերպության վարչական գործունեությանը մասնակից լինելու իրավունքից, ձվազագույնը տասը տարի իր կարգաթողության օրվանից:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

3 մայիս 1970 թ.,
Ս. Էջմիածին